ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մ.Բաղրամյան 26, Հեռ.(0252)2-43-93
Կայք՝ www.aparan.am էլ.փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ
21 ԱՊՐԻԼԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ N 302
ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-38/25 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ << ՀՐԱՉՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ >> ԱՁ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ապարանի համայնքապետարանի կարիքների համար գրասենյակային և այլ գույքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-38/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի 21-25-րդ չափաբաժինների ամենացածր գնային առաջարկներ ներկայացրած մասնակից <<Հրաչյա Վարդանյան>> ԱՁ -ի ներկայացրած էլեկտրոնային հայտում գնահատող հանձնաժողովի կողմից 07.04.2025թվականի հայտերի գնահատման նիստում արձանագրվել է անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ՝ հայտում բացակայել են 21-25-րդ չափաբաժինների առաջարկվող ապրանքների նկարագրերը:

Գնահատող հանձնաժողովը նույն օրը՝ 07.04.2025 թվականին, էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմաբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ կարգ/41-րդ կետի պահանջների շտկման ծանուցում է ուղղարկել <<Հրաչյա Վարդանյան>> ԱՁ-ին և առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: <<Հրաչյա Վարդանյան>> ԱՁ -ի կողմից էլեկտրոնային փաստաթղթերի շտկումը չի կատարվել, ինչի արդյունքում 09.04.2025թվականի գնահատող հանձնաժողովի նիստում, հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմաբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ կարգ/42-րդ կետի պահանջները, <<Հրաչյա Վարդանյան>> ԱՁ -ի հայտը գնահատել է անբավարար և մերժել:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-38/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների 10.04.2025թ. զեկուցագիրը, հաշվի առնելով <<Հրաչյա Վարդանյան>> ԱՁ-ն համաձայն <<Գմումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի Ա) պարբերության խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը:

Որոշում եմ՝

1. Սկսել գործընթաց ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-38/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի մասնակից <<Հրաչյա Վարդանյան>> ԱՁ -ին(ՀՎՀՀ՝ 48039802, ք. Վեդի, Պ. Սևակի 6 , էլ. հասցե gnumner2024@mail.ru) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:
2. Հանձնարարել գնումների համակարգող՝ Հայկ Հովսեփյանին սույն գործընթացը կազմակերպել Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:
3. Սույն որոշման կատարման վերահսկողությունը վերապահել Ապարանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Իդա Թադևոսյանին:
4. Սույն որոշումը ենթակա է կատարման ստորագրման պահից:

Հարգանքներով՝

Ապարան համայնքի ղեկավար՝ **Կ.Մ.Եղիազարյան**

Կատարող՝ Ապարանի համայնքապետարանի
գնումների մասնագետ
Մարիամ Հայրապետյան
Հեռ.՝ +374 94-23-18-93